

Երզնկացին է, այլ Սիսի ցուցակին մէջ վարդապետներու գլուխը յիշուած Մեծքարի դպրապետը<sup>1</sup>։ Ասիկա շփոթութեան պատճառը քիչ շատ կը պարզէ։

Ըսի թէ Հ. Ալիշան Երզնկացիի այս կարծեցեալ Կիլիկիա երթին հետ կապած է Շնորհալիի Մատթէի Մեկնութեան գիրքը գտնելը, միասին Արտազ բերելը և նոյն իսկ ամբողջացնելը 1316ին, և որով Ատանայի ժողովն ալ նոյն տարւոյն հետ կը կապէ։ Երզնկացիի Մատթէի Մեկնութեան յիշատակարանը ակնյայտնի կերպով ցոյց կու տայ թէ՛ գրութեան տեղը և թէ տարին, որ է Ծործորի վանքը և 1316 թիւը. «... Էս նուաստս ի յետինս յորդիս Սիսի ապիկար ոգիս Յովհաննէս Երզնկացի, սպասաւոր բանի, բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն թաղէսի՝ ի վանս Ծործորու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և ժողովեալ առ մեզ բանասէր անձինք ի յուսումն կրթութեան աստուածաշունչ տառից լսելութեան, յորոց յորդորմանէ և ի փափագելի ինչորոյ եղեալ ի մտի առնել հաւաքումն Մեկնութեան...» Էս արդ եղև գրութիւն սորա ի թիւ մարդեղութեան տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ՌՅԺԶ որոյ զօրութեամբ բուռն հարաք զբանէս»։ Հետեւարար Ատանայի ժողովէն առաջ արդէն Երզնկացի ամբողջացուցած էր իր գրական այդ մեծ գործը։ Նոյն տարին իրեն կ'ընծայուի նաև Դանիէլի Մարգարէութեան Մեկնութեան աւարտումը նորէն Ծործորի մէջ<sup>2</sup>։

Յ. Երզնկացիի կեանքին մնացած տարիներու մէջ նշանաւոր պարագայ մը, Անի կատարած ճամբորդութիւնն է և որու մասին Ղազար Զահկեցի կաթողիկոսը զրուցապատում դէպքեր կը յիշատակէ, զոր Հ. Ալիշան կը մէջբերէ Յուշիկներու և Հայապատումին մէջ<sup>3</sup>։ Այդ դէպքերը՝ արտասովոր և հրաշագործ, միակ իրական

Երզնկացիի Անի կատարած ճամբորդութիւնը կը մատնանշեն։

Թէ Երզնկացի էր իր մահականացուն կնքած է, նոյնպէս անորոշ կը մնայ Հ. Ալիշան անորոշ նկատելով հանդերձ, հաւանական կը ցուցնէ 1326 թուականը, զոր Սէն Մարգէն<sup>4</sup> բողոքովին ճիշտ կ'ընդունի։ Հ. Պոտուրեան ձեռագրի մը յիշատակարանին վրայ յեցած կ'երկարածգէ մինչև 1332 թուականը. նոյն տարին Ներսէս կրօնաւոր մը Երզնկայի Ս. Կիրակոս վանքին մէջ կ'ընդօրինակէ մեծանուն վարդապետին քերականութիւնը խնդրանօք «սրբամաքուր և արդիւնարան վարդապետին Յովհաննէսի»։ Արդ ինք սոյն արդիւնարան վարդապետը կը նուագնէ Յովհաննէս Երզնկացիի հետ<sup>5</sup>։ Նոյն Ներսէսի կողմանէ գրուած շարակնոց մըն ալ հասած է մեզի, պահուած Վիեննայի Միլիթ. Մտղը.ի մէջ թ. 133, գրուած 298.ին (1343) և որու յիշատակարանը կը գրէ «... Յիշեսլիք զհեզահոգի վարպետն իմ զՅովհաննէս փիլիսոփայն, և զկրաւնաւոր եղբայր իւր զՄովսէս ծաղկողն որ բազում աշխատեցաւ ի հետ ինձ և խնամս տարան ի վերայ իմ։ Քրիստոս Աստուած միոյն հարիւրապատիկ նոցա և իւրեանց ծնողացն վարձս պարգևեցցէ ամէն<sup>6</sup>»։ Եթէ այս հեզահոգի Յովհաննէս փիլիսոփան Երզնկացին է, ըսել է իր կեանքը երկարած է մինչև 1343։ Յիշուած Մովսէսը չի կրնար մեծահամբաւ Մովսէս Երզնկացին ըլլալ, որ վախճանած էր արդէն 1323ի մայիս 28ին։

Եթէ Յ. Երզնկացիի մահուան թուականը կը մնայ անստոյգ, վայրը աւելի ապահով և որոշ վկայութիւններով կարելի է հաստատել որ Երզնկան ըլլայ։ Բնդհանրապէս շատեր Ծործորի վանքին մէջ վախճանած և թաղուած կը համարին<sup>7</sup>. և Հայրատի վանքին գերեզմանատան մէջ

1. Ազգապատում Բ. մաս, էջ 1819.  
 2. Բզմվ. 1910, էջ 503.  
 3. Յուշիկք. Բ. հտ. էջ 429-432. Հայապատում, էջ 509-514.  
 4. Mémoires, Բ. հտ. էջ 467.

5. Բզմվ. 1910, էջ 503.  
 6. Տաշեան, Մայր Յուցակ, էջ 489.  
 7. Յուշիկք. Բ. հտ. էջ 428. Saint Martin, Mémoires, Բ. հտ. էջ 467.